

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ներգրավելու մասին

21.02.2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Գ. Ա. Առաքելյանս, վերանայելով քննչական խմբի կազմում քննվող թիվ 83166418 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2017թ. օգոստոսի 28-ի մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, մուտք է գործել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությանը փաստացի պատկանող Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի վարչական տարածքում տեղակայված երկաթուղու «Սովետական» քարշային ենթակայանի տարածք և գաղտնի հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 5.713.500 դրամ արժեքի ՏԴՏՆ 1000/110 տիպի ուժային տրանսֆորմատորի պղնձյա փաթույթները:

2018թ. հուլիս ամսին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության էլեկտրաֆիկացիայի և էներգամատակարարման ձեռնարկության Երևանի հենակետային կայանի պետ Հովիկ Էլբակյանի կողմից ստուգման արդյունքում պարզվել է, որ ընկերության «Եղվարդ» քարշային ենթակայանից բացակայում է առանձնապես խոշոր չափերի ընդհանուր 10.016.948,4 դրամի՝ ՏՄՊ 6300/35 տիպի 4 հատ ուժային տրանսֆորմատորների պղնձյա փաթույթները:

Դեպքի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2018թ. նոյեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58226118 քրեական գործը:

2018թ. դեկտեմբերի 3-ից քրեական գործի հետագա նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

2018թ. դեկտեմբերի 24-ին թիվ 58226118 քրեական գործը միացվել է թիվ 83166418 քրեական գործին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննության է հրավիրել Գալինա Զալլաթյանը և պարզվել է, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին:


Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է վկա Գալինա Զալլաթյանի հետ կատարել մի շարք քննչական և դատավարական գործողություններ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունը տարվում է հայերենով, իսկ Գ.Զալլաթյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին և քանի որ Արմինե Մինասյանն ազատորեն տիրապետում է գրավոր ու բանավոր հայերեն ու ռուսերեն լեզուներին, ունի համապատասխան որակավորում, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 15-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Թիվ 83166418 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Արմինե Մինասյանին («Վի-Գրուպ» ՍՊԸ, անձնագիր AF0479573):

ՀԿԳ ավագ քննիչ



Գ.Ա.Առաքելյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ



Արմինե Մինասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ՝
Թարգմանիչ հրավիրելու մասին

10 սեպտեմբերի 2018թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Տ.Հ.Շոխոյանս, վերանայելով քննչական խմբի վարույթում քննվող թիվ 83166418 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2015-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունից արտահանվել է 1893 տոննա քաշով երկաթուղային ուղիներ՝ որակված որպես մետաղի ջարդոն, իսկ Հայաստանի Հանրապետությունում թվով 2 գնորդների օտարվել է 1077 տոննա մետաղի ջարդոն, որոնք իրացվել են շուկայականից ցածր գներով, արդյունքում ընկերության կողմից չի հաշվարկվել և պետական բյուջե չի վճարվել ԱԱՀ-ի գծով ընդհանուր՝ 9.779.160 ՀՀ դրամի գումար:

Այսինքն՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու միջոցով ՀՀ պետական բյուջե չի վճարվել խոշոր չափերի՝ 9.779.160 ՀՀ դրամի ԱԱՀ:

Դեպքի առթիվ 2018թ-ի օգոստոսի 14-ին ՀՀ ՊԵԿ հետաքննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 83166418 քրեական գործը:

2018թ-ի օգոստոսի 21-ին «Լիոն փրինթինգ սերվիս» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Սահակյանը ցուցմունք է տվել, որ 2012-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում իրենց ընկերությունը պայմանագրեր է կնքել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության հետ՝ խիճ մատակարարելու վերաբերյալ, որում ներառված են եղել նաև տեղափոխման ծախսերը: Այդ նպատակով «Ռուսական երկաթուղիներ» ԲԲ ընկերությունը որպես ներդրումային ծախսեր, գումարներ է փոխանցել իրենց ընկերության հաշվեհամարին, սակայն իրենք «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության հետ միաժամանակ կնքել են նաև խճի տեղափոխման մասին պայմանագիր, իսկ «Ռուսական երկաթուղիներ» ԲԲ ընկերության փոխանցած գումարներն փոխանցել են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության հաշվեհամարին՝ իբրև խճի տեղափոխման ծառայությունների վճար, որը ձևակերպվել է որպես շահույթ: Նկարագրված եղանակով «Լիոն փրինթինգ սերվիս» ՍՊ ընկերությունը որպես վճար 2012թ-ին՝ 58.631.699 դրամ, 2013թ-ին՝ 102.267.993 դրամ, 2014թ-ին՝ 17.408.922 դրամ, 2016թ-ին՝ 38.896.124 դրամ,

2017թ-ին՝ 84.864.262 դրամ գումար է հետ փոխանցել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությանը:

Բացի այդ, 2015թ-ին Ս. Վալկոյի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն նշանակվելուց մեկ ամիս հետո, վերջինիս ընկերը հիմնադրել է «ՄԲՍ» ՍՊ ընկերությունը, որն առանց մրցույթի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության հետ կնքել է պայմանագիր՝ երկաթգծի ռելսերը հատուկ թանկարժեք յուղերով յուղելու և ռելսերի ճաքերը զոդելու ծառայություններ մատուցելու վերաբերյալ և մինչ 2015թ-ի ավարտը՝ 3 ամսվա ընթացքում, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության հետ կատարել է շուրջ 40.000.000 դրամի, 2016թ-ին՝ 99.000.000, իսկ 2017թ-ին՝ 96.000.000 դրամի գործարքներ, սակայն իրականում «ՄԲՍ» ՍՊ ընկերությունն այդ յուղերը վաճառել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությանը, իսկ վերջինս էլ այն տրամադրել է «ՄԲՍ» ՍՊ ընկերությանը՝ յուղելու համար, «ՄԲՍ» ՍՊ ընկերությունը ստեղծվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ս. Վալկոյի գումարների լվացման նպատակով:

2018թ. օգոստոսի 22-ին թիվ 83166418 քրեական գործը ուղարկվել է ՀՀ ՊԵԿ քննչական վարչություն:

Նկատի ունենալով, որ թիվ 83166418 քրեական գործի նախաքննության ընթացքում հատնաբերվել են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշներ, ուստի 2018թ-ի օգոստոսի 22-ին ՀՀ ՊԵԿ քննչական վարչություն ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 83102818 քրեական գործը:

2018թ-ի օգոստոսի 22-ին որոշում է կայացվել թիվ 83102818 և 83166418 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու վերաբերյալ:

2018թ-ի օգոստոսի 23-ից թիվ 83166418 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Թիվ 83166418 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել «ՄԲՍ» ՍՊ ընկերության աշխատակից՝ Գենադի Վալերիի Կոտովին:

Նախաքննությամբ պարզվել է, որ Գենադի Վալերիի Կոտովը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Գենադի Վալերիի Կոտովը չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, և ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 83166418 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Անուշ Խանիկյանին /ծնված 04.10.1973թ., հաշվառված ք.Երևան, Նորաշեն 14շ. 29րն. անձնագիր՝ AR0262763, աշխատում է «Վի Գրուպ» ՍՊԸ-ում որպես թարգմանիչ/, ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չհասագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Անուշ Խանիկյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


ՀԿԳ քննիչ՝



Տ. Ա. Շիխոյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է « 10 » 09 2018 թ: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:


Թարգմանիչ՝



Ա. Խանիկյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

ՀԿԳ քննիչ՝



Տ. Ա. Շիխոյան


Տ ե ղ ե կ ա ն ք
թիվ 83166418 քրեական գործով

10 սեպտեմբերի 2018թ.

ք. Երևան

Սույն տեղեկանքը տրվում է «Վիպ Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանին առ այն, որ Ա.Խանիկյանը 2018թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 83166418 քրեական գործով մասնակցել է ՌԴ քաղաքացիներ Գենադի Կոտովի և Անդրեյ Լիտվինովի որպես վկա հարցաքննություններին և կատարել հայերենից ռուսերեն թարգմանություն, որը տևել է 3 ժամ 40 րոպե:

ՀԿԳ քննիչ՝



Տ.Տ.Շոխոյան


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

01.03.2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 83166418 քրեական գործի նախաքննության ընթացքում <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից լիազորված թարգմանիչ Արմինե Մինասյանը, 2019թ.-ի փետրվարի 21-ին և 2019թ.-ի մարտ 1-ին ընդհանուր 9 ժամ տևողությամբ որպես թարգմանիչ մասնակցել է վկաներ Գալինա Ջալլաթյանի և Միխայիլ Մարգունովի հարցաքննություններին, որոնց ընթացքում կատարել է հայերենից ռուսերեն բանավոր թարգմանություն:

ՀԿԳ ավագ քննիչ



Գ.Ա.Առաքելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՏԿԱՂԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

« 12 » Ճանվար 2019 թ.

N Զ-159/19

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Սույն տեղեկանքը տրվում է «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Արմինե Մինասյանին առ այն, որ վերջինս ՀՀ ՔԿ ՀԿԳ գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության վարույթում քննվող թիվ 83166418 քրեական գործով կատարել է ուսերեն լեզվից հայերեն լեզվով և հակառակը թարգմանություն՝ ընդհանուր 6 ժամ տևողությամբ:

ՀԿԳ քննիչ՝

Ա. Լ. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
/Թարգմանիչ նշանակելու մասին/

24.07.2019թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ.Ասատրյանս, քննչական խմբի կազմում, վերանայելով թիվ 38101219 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Ապօրինի ծառահատումների դեմ պայքարի խստացման հետ կապված մի շարք քաղաքացիներ իրենց դժգոհություններն արտահայտելու նպատակով 2019 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 18-ի սահմաններից սկսած փակել են Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի Իջևան քաղաքի Երևանյան ու Իջևանյան փողոցների հատման խաչմերուկի հարվածը, որի ընթացքում՝ ժամը 20³⁰-ի սահմաններում, մի խումբ անձինք խուլիգանական դրդումներով դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության՝ Իջևան քաղաքի բնակիչների և երթևեկության մասնակիցների նկատմամբ, բղավել, փակել են հայիոյանքներ, վնասել են նշված խաչմերուկում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի թիթեղյա ծածկը, գործադրել բռնություն, իսկ խուլիգանության մասնակիցների մի մասը որպես զենք օգտագործվող առարկաների՝ քարերի և մահակների գործադրմամբ մարմնական վնասվածքներ են պատճառել հասարակական կարգի ապահովման նպատակով հիշյալ վայրում ծառայություն իրականացնող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող «Ռուսիկանության մի շարք աշխատակիցներին և չենթարկվելով վերը նշված հանցավոր գործողությունները դադարեցնելու նրանց օրինական պահանջին, «Ռուսիկանության աշխատակիցների նկատմամբ, իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված, նրանց նկատմամբ գործադրել են ինչպես կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր, այնպես էլ վրանգավոր բռնություն:

Դեպքի առթիվ 2019 թվականի հուլիսի 18-ին «Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում «Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 38101219 քրեական գործը:

2019 թվականի հուլիսի 18-ին քրեական գործն ուղարկվել է «Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել է վարույթ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննելու Վաղինակ Սարգսի Անանյանին, ով բավարար չափով չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Վաղինակ Անանյանը, բավարար չափով չի տիրապետում «Քրեական դատավարության լեզվին՝ հայերեն բանավոր և գրավոր խոսքին,

ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանչի օգնությամբ հրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքերը, ուստի՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով:

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 38101219 քրեական գործով որպես թարգմանիչ նշանակել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին /ծնված 17.03.1980թ., ՀՀ քաղաքացի, անձնագիր՝ AR0516452/, ով դեպքով չհաճագրգռված անձ է, ունի ոռուերեն լեզվի թարգմանիչի որակավորում և ազատորեն տիրապետում է ոռուերեն գրավոր և բանավոր լեզվին:

2. Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, ինչպես նաև նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝

Ա.Գ.Ասատրյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Տ.Քոչարյան

«24» 07 2019 թ.


ՏԵՂԵԿԱԼՔ

24.07.2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի հարկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Գ.Ասափրյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը ՀՀ ՔԿ ՀԿԳ ՔԳ վարչությունում քննվող թիվ 38101219 քրեական գործով 2 ժամ տևողությամբ կատարել է թարգմանություն ոուսերեն լեզվից հայերեն և հակառակը:

ՀԿԳ քննիչ՝



Ա.Գ.Ասափրյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

01 մարտի 2019թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Տ.Փոթիկյանս, քննարկելով Վրաստանի արդարադատության նախարարության գլխավոր դատախազությունից ստացված թիվ 009280119001 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումը,

ՊԱՐԶԵՑԻ

Վրաստանի արդարադատության նախարարության գլխավոր դատախազությունից ստացված թիվ 009280119001 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ պահանջվում է որպես վկա հարցաքննել ներկայումս «Վրաստանի արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող Դմիրտի Ալեքսանդրի Անդրեևի (ծնված՝ 11.08.1986թ.):

Դմիրտի Ալեքսանդրի Անդրեևը «Քրեական դատավարության լեզվին հայերենին, չի տիրապետում, լիարժեք տիրապետում է վրացերեն լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Վրաստանի արդարադատության նախարարության գլխավոր դատախազությունից ստացված թիվ 009280119001 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Հեղինե Գագիկի Սարգսյանին (ծնված՝ 14.10.1976թ., անձնագիր՝ AN0501544, տրված՝ 06.06.2013թ., 004-ի կողմից, ներկայացրել է «ՍՄԱՐԹ ՉՈՅԱ» լեզուների ուսուցման մասնագիտական կենտրոնի կողմից 28.10.2017թ. տրված վրացերենի դասընթացների ավարտական վկայականը՝ թարգմանչի որակավորում ունենալու մասին), ազատորեն տիրապետում է հայերեն և վրացերեն լեզուներին, որը գործով չչահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Հեղինե Գագիկի Սարգսյանին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

«Քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական



Տ.ՓՈԹԻԿՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է 01.03.2019թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ



Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների
ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական



Տ.ՓՈԹԻԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ


ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Տ.Հ.Փոթիկյանս կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ Վրաստանի արդարադատության նախարարության գլխավոր դատախազությունից ստացված թիվ 009280119001 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցման պահանջերի կատարման ընթացքում 2019 թվականի մարտի 01-ին վկա Դմիտրի Ալեքսանդրի Անդրեևի հարցաքննությունն իրականացնելիս, վերջինիս կողմից դատավարական լեզվին՝ հայերենին, չտիրապետելու պատճառով, նրա որպես վկայի դատավարական իրավունքներն ապահովելու նպատակով, կայացված որոշման հիման վրա տրամադրվել է հայերեն-վրացերեն թարգմանիչ: Թարգմանությունը ապահովել է «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Հեղինե Գագիկի Սարգսյանին (ծնված՝ 14.10.1976թ., անձնագիր՝ AN0501544, տրված՝ 06.06.2013թ., 004-ի կողմից, ներկայացրել է <<ՍՄԱՐԹ ՉՈՅՍ>> լեզուների ուսուցման մասնագիտական կենտրոնի կողմից 28.10.2017թ. տրված վրացերենի դասընթացների ավարտական վկայականը՝ թարգմանչի որակավորում ունենալու մասին):

Հ.Սարգսյանը իրականացրել է 1/մեկ/ ժամ 42/քառասուն երկու/ րոպե բանավոր թարգմանություն:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային

հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ,

արդարադատության երրորդ դասի խորհրդական



Տ.Հ.Փոթիկյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

06 օգոստոսի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Տ.Փոթիկյանս, քննարկելով Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեից ստացված թիվ 08018000212 քրեական գործով հրավական օգնություն ցույց տալու մասին հարցումը,

ՊԱՐԶԵՑԻ

Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեից ստացված թիվ 08018000212 քրեական գործով հրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ պահանջվում է դատավարական գործողություններ կատարել ներկայումս ՀՀ քաղաքացի հանդիսացող և Հայաստանի Հանրապետությունում բնակվող Գեորգի Գեորգիի Հարությունյանի (ծնված՝ 18.12.1969թ., նախկին ազգանունը՝ Մարմուրոկ) հետ:

Գեորգի Գեորգիի Հարությունյանն իր 24.07.2019թ. դիմումով հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության լեզվին հայերենին, չի տիրապետում, լիարժեք տիրապետում է ռուսերեն լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.


ՈՐՈՇԵՑԻ

1. Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեից ստացված թիվ 08018000212 քրեական գործով հրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին (ծնված՝ 29.01.1986թ., անձնագիր AN0213064, տրված 24.07.2012թ., 004-ի կողմից, հաշվաձևված՝ ք.Երևան, Վրացական պող., շենք 21/1, բն. 1 հասցեում, ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված 09.07.2012թ. տեղեկանք՝ թարգմանչի որակավորում ունենալու մասին, «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից տրված 06.08.2019թ. լիազորագիրը), ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, որը գործով չջահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները և

նախագգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական



Տ.ՓՈԹԻԿՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է 06.08.2019թ.: Ես նախագգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ



Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պատասխանատվության մասին նախագգուշացրեց:

պարտականությունները պարզաբանեց,

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական



Տ.ՓՈԹԻԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Տ.Հ.Փոթիկյանս կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեից ստացված թիվ 08018000212 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցման պահանջերի կատարման ընթացքում 2019 թվականի օգոստոսի 06-ին մեղադրյալ Գեորգի Գեորգիի Հարությունյանի մասնակցությամբ դատավարական գործողություններ իրականացնելիս, վերջինիս կողմից դատավարական լեզվին՝ հայերենին, չտիրապետելու պատճառով, նրա որպես մեղադրյալի դատավարական իրավունքներն ապահովելու նպատակով, կայացված որոշման հիման վրա տրամադրվել է հայերեն-ռուսերեն թարգմանիչ: Թարգմանությունը ապահովել է «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանը (ծնված՝ 29.01.1986թ., անձնագիր AN0213064, տրված 24.07.2012թ., 004-ի կողմից, հաշվաձված՝ ք.Երևան, Վրացական պող., շենք 21/1, բն. 1 հասցեում, ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված 09.07.2012թ. տեղեկանք՝ թարգմանչի որակավորում ունենալու մասին, «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից տրված 06.08.2019թ. լիազորագիրը):

Ա.Մինասյանն իրականացրել է 1/մեկ/ ժամ 45 /քառասուն հինգ/ րոպե բանավոր թարգմանություն:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային

հարցումների ապահովման բաժնի ՀԿԳ քննիչ,

արդարադատության երրորդ դասի խորհրդական

06.08.2019թ.



Տ.Հ.Փոթիկյան

ՈՐՈՇՈՒՄ

Գործին թարգման ներգրավելու մասին

29 նոյեմբերի 2017թ.

ք.Երևան

Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Վ. Սարգսյան, քննրակելով վարույթիս թիվ 14895217 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2017թ. հոկտեմբեր ամսին քննությամբ չարզված օրը՝ ժամը 03-ի սահմաններում, Անդրանիկ Ասիրյանը և Վլադիմիր Ռյաբուխան նախնական համաձայնությամբ, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ միասին ապօրինի մուտք են գործել Երևան քաղաքի Ն. Տիգրանյան փողոցի 5-րդ շենքի 23-րդ բնակարան և այնտեղից գողացել են շուրջ 700.000 ՀՀ դրամ գումար:

Ղեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում 2017թ. նոյեմբերի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 14895217 քրեական գործը և նույն օրն ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

13.11.2017թ. քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նախաքննությամբ պարզվել է, որ կասկածյալ Վլադիմիր Ռյաբուխան չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, բավարար չափով տիրապետում է ռուսերենին:

Նկատի ունենալով, որ նրա մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել քննչական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15, 83, և 89 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 14895217 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Արմինե Մինասյանին, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:
2. Թարգմանին ծանոթացնել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ. Սարգսյան

Որոշմանը ծանոթացա, իրավունքներս և պարտականություններս բացատրված են, պատասխանատվության համար զգուշացված եմ

Թարգման՝

Ա. Մինասյան

ՏԵՂԵԿԱԼՔ

Տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 14895217 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Արմինե Մինասյանը կատարել է ընդհանուր 4 ժամ 30 րոպե ուսերեն լեզվով բանավոր թարգմանություն:

Քննիչ՝



Վ. Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«05» հուլիսի 2019թ.

ք.Երևան

«ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, Ս.Տոնոյանս, վերանայելով վարույթիս թիվ 13191819 քրեական գործի նյութերը.

Պ ա ր գ ե ց ի՝

2019թ. հունիսի 6-ին՝ ժամը ժամը 07:30-ից մինչև 15:00-ն ընկած ժամանակահատվածում, Հովհաննես Հովհաննիսյանը և Միշա Բրգանունցը Երևան քաղաքի Մյասնիկյան փողոցում գտնվող «Իբիցա» հյուրանոցային համալիրում վիճաբանել են Սոնա Միսակյանի հետ, որի ընթացքում վերջինիս մարմնի տարբեր մասերին հարվածներ են հասցրել պատճառելով առողջության թեթև վնաս ու գաղտնի հափշտակել Ա.Միսակյանին պատկանող 300.000 ՀՀ դրամ գումարը:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում 25.06.2019թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի և 117-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 13191819 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ դատավարական մասնակիցները բավարար չափով չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, իսկ Տաթևիկ Քոչարյանը ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր և բանավոր լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13191819 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊԸ մասնագետ Տաթևիկ Քոչարյանին ներգրավվել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


Քննիչ՝



Ս.Տոնոյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Տ.Քոչարյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Տոնոյանս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին , որ վարույթումս քննվող թիվ 13191819 քրեական գործով «Վի Գրուպ ՍՊԸ» ընկերության կողմից լիազորված ուսերեն լեզվի թարգմանչուհի Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը կատարել է բանավոր և գրավոր թարգմանություն ուսերեն հայերեն և հակառակը ընդհանուր5 ժամ թարգմանություն:

**ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ
վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ՝**



S.Տոնոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

28 հունիսի, 2019թ.

ք.Երևան

«ՔԿ ԵՔԲՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Վ.Մանասյանս, ուսումնասիրելով վարույթում քննվող թիվ 63201517 քրեական գործի նյութերը»

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017 թվականի մարտի 29-ին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապարրասրելու և հետագա ընթացքը լուծելու հանձնարարությամբ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում ստացվել է Արուսե Հայկազի Թորոսյանի կողմից Երևան քաղաքի դատախազին հասցեագրված դիմումն այն մասին, որ իր ծնողներ Լարիսա Հուսիկի Ղազարյանի և Հայկազ Մարտիրոսի Թորոսյանի ամուսնալուծության վերաբերյալ քննվող քաղաքացիական գործով Հ.Թորոսյանի կողմից որպես ապացույց Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարան է ներկայացվել ամուսնալուծության կեղծ վկայական:

Դեպքի առթիվ ոստիկանության Արաբկիրի բաժնում նախապարրասրվել են նյութեր և 2017 թվականի ապրիլի 08-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

2017 թվականի մայիսի 02-ին Երևան քաղաքի դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 349-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 63201517 քրեական գործը հարուցելու մասին:

2019 թվականի հունիսի 06-ին հիշյալ քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ և ընդունվել վարույթ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել առերես հարցաքննություն իրականացնել Լարիսա Ղազարյանի հետ, ով չի փրապետու հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ փրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:


Նկատի ունենալով, որ վկա Լարիսա Ղազարյանի հետ անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական և դատավարական գործողություններ, այն ինչ վերջինս փրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, իսկ հայերեն լեզվի չի փրապետու՝ ընդհանրապես: Հաշվառնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարությունը փարվում է հայերեն լեզվով, իսկ Լարիսա Ղազարյանը չի փրապետու հայերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի գոուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Արմինե Քաջիկի Մինասյանին՝ բարձրագույն կրթությամբ, հաշվառված ք.երևան Կրացական փողոց 21/1 շենք 1-ին բնակարան,

2. Թարգմանիչ Արմինե Մինասյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պարասխանաւորվության մասին:

Ավագ քննիչ՝



Լ.Վ.Մանասյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

28 հոկտեմբեր 2019թ. Արմինե Մինասյան


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

28 հունիսի, 2019թ

ք.Երևան

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Հ.Վ.Մանասյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննված թիվ 36201517 քրեական գործով՝ Արմինե Մինասյանին ուսերենից հայերեն և հակառակը, կարարել է թարգմանություն 4 ժամ:

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Հ.Վ.Մանասյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

«15» ապրիլի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Լ. Ֆ. Բաղդասարյանս, վերանայելով վարույթիս թիվ 17183219 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2019 թվականի մարտի 19-ին՝ ժամը 19:45-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում, ապա նաև բացատրություն է տվել "ՎՏԲ-Հայաստան" ՓԲԸ-ի թիվ 21 մասնաճյուղի կառավարիչ Ալինա Արկադիի Գրիգորյանն այն մասին, որ 22.02.2019թ.՝ ժամը 15:00-ի սահմաններում, թիվ 21 մասնաճյուղ է այցելել հաճախորդ, ազգությամբ հնդիկ Դիլիպ Դեսայի Բակրիշ Նբային, ով իրականացրել է տարադրամի փոխանակում և գանձապահին է տվել 100 ԱՄՆ դոլար թղթադրամ, որը եղել է հնամաշ՝ ներքևի կամ վերևի հատվածում պատռված, այնուհետև, գանձապահն իրազեկել է, որ ընդունվել է որպես հնամաշ և պահվելու է որոշակի տոկոս, ինչին հաճախորդը համաձայնել է և գանձապահը նշված թղթադրամը ստուգել է համապատասխան սարքով և լազերով, ինչից հետո իրականացվել է փոխանակում և հաճախորդին տրվել է դրամ: Դրանից հետո, օրվա վերջին իրականացվել է ինկասացիա և հիշյալ թղթադրամը, մյուս արժույթների հետ ուղարկվել է բանկի պահոց: Այնուհետև, 25.02.2019թ. իրեն զանգահարել է գլխամասի աշխատակիցը և հայտնել, որ հիշյալ մաշված ԱՄՆ դոլար թղթադրամը եղել է կեղծ:

29/03/2019թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17183219 քրեական գործը:

Սույն գործը 04.04.2019թ. ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի և նախաքննության հետագա կատարումը հանձնանարվել է ինձ:


Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել ազգությամբ հնդիկ Դեսայի Դիլիպին, ով չի տիրապետում գրավոր և բանավոր հայերեն լեզվին /խոսքին/, այլ տիրապետում է հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին /խոսքին/:

Նկատի ունենալով, որ Դեսայի Դիլիպին չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյան ազատորեն տիրապետում է հայերեն և հնդկերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վարույթիս թիվ 17953618 քրեական գործով «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



L. Ֆ. Բաղդասարյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները, ստացա դրա պատճենը




Մ. Աչարյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 17183219 քրեական գործով «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Աչարյան 2019 թվականի հունիսի 25-ին կատարել է 1 ժամ 40 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝




Լ.Ֆ.Բաղդասարյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 17183219 քրեական գործով «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Աչարյան 2019 թվականի ապրիլի 15-ին կատարել է 2 ժամ 30 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝



Լ.Ֆ.Բաղդասարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Գործով թարգման ներգրավելու մասին

« 03 » հունիսի 2019 թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Խաչատրյան, վերանայելով վարույթիս թիվ 10192319 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 09:05-ին, «Արմենիա» ՀԲԿ-ից ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ահազանգ է ստացվել այն մասին, որ շտապօգնության թիվ 17 հերթափոխը «Իզմիրյան» ԲԿ-ի մոտից «Պոլիտրավմա» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխել ոմն Սամվել անունով անձի: Ըստ «Իզմիրյան» ԲԿ-ի բժշկի հայտարարության՝ վերջինս գտնվել է ծեծված վիճակում:

Նշված ահազանգի հիման վրա ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ «Արմենիա» ՀԲԿ բուժօգնության տեղափոխված նշված անձը հանդիսացել է Դավիթ Վիտալիի Նավայանը:

Նշված ահազանգի հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում Դավիթ Վիտալիի Նավայանի մայրը՝ Էլենա Գևորգի Նավայանը տվել է հաղորդում և բացատրություն այն մասին, որ 2019 թվականի մայիսի 22-ին կամ մայիսի 23-ին Երևան քաղաքի Նազարբեկյան 22 հասցեում գտնվող թիվ 22 դպրոցում «Ապո» մականունով Արմեն Ղազարյանը մի խումբ այլ անձանց հետ ծեծի են ենթարկել որդուն՝ Դավիթ Նավայանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նախապատրաստված նյութերը 27.05.2019թ.-ին կայացված՝ հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշմամբ ուղարկվել են ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի:

Փաստի առթիվ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում 2019 թվականի մայիսի 31-ին կայացվել է որոշում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով թիվ 10192319 քրեական գործը հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին:

2019 թվականի մայիսի 31-ին կայացվել է որոշում՝ թիվ 10192319 քրեական գործը նախաքննության՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ուղարկելու վերաբերյալ: Նույն օրը նշված քրեական գործը մուտքագրվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, որտեղ այն ընդունվել է վարույթ, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Վաչիկ Վաղինակի Համազարյանին, սակայն վերջինս ունի լսողական և խոսակցական սահմանափակումներ, ինչով պայմանավորված՝ անհրաժեշտ է Վազիկ Համազարյանի հարցաքննությունը իրականացնել համապատասխան սուրդոթարգմանչի միջոցով:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 10192319 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Նիկոլի Մալխասյանին:
2. Ս. Մալխասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Ա. Խաչատրյան

Ինձ պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 83-րդ հոդ. նախատեսված թարգմանի իմ իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝



Ս. Մալխասյան

«03» հունիսի 2019 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

թիվ 10192319 քրեական գործով

« 03 » հունիսի 2019 թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Խաչատրյանս, վարույթիս թիվ 10192319 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ գործով թարգման ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Նիկոլի Սալխասյանը Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում թարգմանություններ կատարելու համար գտնվել է 03.06.2019թ.-ին ժամը 16:00-ից 18:30-ը:

Ավագ քննիչ՝



Ա. Խաչատրյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

20. 08. 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնիչ Ա.Կ.Թովմասյանս, վերանելով վարույթումս քննվող թիվ 15191618

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի մայիսի 31-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Դավուդ Թաշիաքորի Աբուլղասեմին, որ նույն օրը ժամը 19:00-ի սահմաններում Մաշտոցի 12 հասցեում գործող պարսկական <Մզկիթում> Շափուր Աբբասալիի Լոթֆին մեկ անգամ ձեռքով հարվածել է իր դեմքին և երկու անգամ ոտքով ոտքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Նաշանակաված դատաբժշկական փորձաքննության թիվ 1010 եզրակացության համաձայն՝ Դ.Աբուլղիասեմիի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ այտային, ձախ ծնկահոդի շրջանների քերծվածքների, արյունազեղումների ձևով, պատճառվել են բույք, կոշտ առարկաներով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում և հանգամանքերում, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Փաստի առթիվ 28.06.2018թ. ոստիկանության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 15191618 քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Քրեական գործը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական տուժող Դավուդ Թաշիաքորի Աբուլղասեմին և կասկածյալ Շափուր Աբբասալիի Լոթֆին չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, տիրապետում են պարսկերեն բանավոր ու գրավոր լեզվին մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Վահանգն Ղազարյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Թիվ 15191618 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Վահագն Ղազարյանին՝ /անձնագիր AM 0755433/:
2. Վահագն Ղազարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ա. Կ. Թովմասյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



Վահագն Ղազարյանին

«20» 08 2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԶ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Երևան 0070. Վրացյան փ. 90

« 17 » 06 2019թ.

№ 42115191618-19

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 15191618 քրեական գործով թարգմանիչ Վահագն Ղազարյանը իրականացրել է հայրենից պարսկերեն և պարսկերենից հայրերեն շուրջ 4 ժամ 40 րոպե թարգմանություն:

Ավագ քննիչ՝

Ա. Կ. Թովմասյան